



**ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ**  
**ՀԱՅ ԲԱՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏ**

**Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն Թ Ի Վ 9**

**ԵՊՀ-Ի ՀԱՅ ԲԱՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏԻ ԳԻՏԽՈՐՀՐԴԻ՝  
2021 Թ. ՄԱՅԻՄԻ 27 - ԻՆ ԿԱՅԱՑԱԾ ՆԻՍՏԻ**

***Օրակարգում՝***

1. Մանկավարժական պրակտիկայի արդյունքների քննարկում
2. 2021 – 22 ուստարվա հայ բանասիրության ֆակուլտետ դիմաձ դիմորդների շարժի մասին
3. Ասպիրանտների և հայցորդների ատեստավորում
4. Պրոֆեսորների և դոցենտների թափուր պաշտոնների տեղակալման ընտրություն
5. Ընթացիկ հարցեր:

Սկսելով գիտական խորհրդի նիստը՝ հայ բանասիրության ֆակուլտետի դեկան պրոֆ. Ա. Ավագյանը տեղեկացրեց, որ գիտխորհրդի 36 անդամներից նիստին մասնակցում է 32-ը, և ապահովված է անհրաժեշտ քվորումը: Նա այնուհետև ընթերցեց նիստի օրակարգը, որը հաստատվեց միաձայն բաց քվեարկությամբ:

**Օրակարգի 1-ի հարցի** առթիվ ֆակուլտետի դեկանի տեղակալ դոց. Ա. Սարգսյանը և մանկավարժական պրակտիկա ունեցող համապատասխան ամբիոնների

վարիչներն ասացին, որ այս տարի պրակտիկայի կազմակերպումը մի փոքր ավելի բարդ էր՝ պայմանավորված համավարակով և հեռավար դասերի անցկացումով: Ուսանողները հիմնականում բավարարված են պրակտիկայի արդյունքներով:

Ելույթ ունեցողները հույս հայտնեցին, որ հաջորդ տարիներին նմանատիպ իրավիճակներ չեն լինի և մանկավարժական պրակտիկան հնարավոր կլինի անցկացնել առավել արդյունավետ:

**Օրակարգի 2 - ըր հարցի** առթիվ ֆակուլտետի դեկան պրոֆ. Ա. Ավագյանը տեղեկացրեց, որ այս տարի առաջին փուլով հայ բանասիրության ֆակուլտետ է դիմել 66 դիմորդ: Պրոֆ. Ա. Ավագյանը նշեց, որ այս թիվը չնայած զիջում է նախորդ տարիներին ֆակուլտետ դիմածների թվին, սակայն հաշվի առնելով համավարակը, պատերազմի հետևանքով առաջացած ծանր բարոյահոգեբանական իրավիճակը՝ կարելի է այն բավարար համարել և հույս հայտնել, որ երկրորդ փուլով դեռևս էլի դիմորդներ կլինեն:

**Օրակարգի 3-րդ՝** առկա ասպիրանտների և հայցորդների ատեստացիայի առիթով առանձին-առանձին ներս հրավիրվեցին համապատասխան ամբիոնների առկա ուսուցման ասպիրանտներն ու հայցորդները: Վերջիններս ներկայացրին հաշվետու ժամանակահատվածում իրենց կատարած աշխատանքները: Գիտխորհրդի անդամները մասնավորապես

**ԼՄԵՑԻՆ** - հայոց լեզվի ամբիոնի առկա 3 – ըր կուրսի ասպիրանտ Միրանուշ Էդուարդի Կեսոյանի ատեստավորման հարցը:

**ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ** - Պրոֆ., պրոֆ. Ա. Ավագյանը, Յու. Ավետիսյանը, Ա. Աբաջյանը, դոց. դոց. Ա. Սարգսյանը, Բ. Ներսիսյանը:

Նշվեց, որ Միրանուշ Կեսոյանը 2018 թ. ընդունվել է ասպիրանտուրա (առկա ուսուցում) <<Հայոց լեզու>> մասնագիտության գծով (Ժ.02.01): Նրա ատենախոսության թեման է <<Ներակայումը արդի հայերենում>>, դեկավար՝ ք. գ. դ., պրոֆ. Յուրի Ավետիսյան:

Միրանուշ Կեսոյանը 2020-2021 ուստարում լրացրել է մասնագիտական պրակտիկայի ծրագրով նախատեսված ժամաքանակը (ԵՊՀ սոցիոլոգիայի

ֆակուլտետում): Շարադրել է ատենախոսության գերակշիռ մասը: Տպագրել է 2 հոդված՝ «Ներակայման դրսևորումները արդի հայերենի շարահյուսական մակարդակում. բառակապակցություն և նախադասություն» ( «Բանբեր Երևանի համալսարանի. Բանասիրություն», 2020, № 1 (31), էջ 74-84) և «Ներակայումը արդի հայերենի բառային մակարդակում» («Հայագիտական հանդես», 2021, № 2 (51), էջ 37-49): 3-րդ հոդվածը՝ «Ներակայումը արդի հայերենի ձևաբանական մակարդակում», լույս կտեսնի 2021 թ. հունիսին «Գիտական Արցախ» պարբերականում: Պատրաստ է նաև 4-րդ հոդվածը: Աշխատում է ևս 2 հոդվածի վրա:

**ՈՐՈՇԵՑԻՆ** - Հայոց լեզվի ամբիոնի ասպիրանտ Մ. Կետյանին ատեստավորել:

**ԼՍԵՑԻՆ** - Հայոց լեզվի ամբիոնի առկա 3 – րդ կուրսի ասպիրանտ Անուշ Անդրանիկի Խաչատրյանի ատեստավորման հարցը:

**ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ** - Պրոֆ., պրոֆ. Ա. Ավագյանը, Յու. Ավետիսյանը, Ա. Աբաջյանը, դոց. դոց. Ա. Սարգսյանը, Բ. Ներսիսյանը:

Նշվեց, որ Անուշ Խաչատրյանը 2018 թ. ընդունվել է ասպիրանտուրա (առկա ուսուցում) «Հայոց լեզու» մասնագիտության գծով (Ժ.02.01): Նրա ատենախոսության թեման է «Էլեկտրոնային մամուլի լեզուն (բառապաշար, քերականական իրողություններ)», ղեկավար՝ Բ. Գ. Պ., դոց. Փառանձեմ Մեյթիխանյան: Անուշ Խաչատրյանը 2020–2021 ուստարում լրացրել է մասնագիտական պրակտիկայի ծրագրով նախատեսված ժամաքանակը (ԵՊՀ ինֆորմատիկայի և կիրառական մաթեմատիկայի ֆակուլտետում): Նույն ժամանակահատվածում լույս է տեսել երեք հոդված՝ «Իմաստային և դիպվածային նորաբանությունները հայաստանյան էլեկտրոնային մամուլում» (2018-2019 թթ.), ՎԷՄ, 2020, ապրիլ–հունիս 2 (70), «Էլեկտրոնային մամուլի հրապարակումների վերնագրերի լեզվական առանձնահատկությունները», Բանբեր Երևանի Վ. Բրյուսովի անվան պետական լեզվահասարակագիտական համալսարանի, 2020, 1 (54), «Ժարգոնը էլեկտրոնային մամուլի էջերում», Հայագիտական հանդես, 2021, 2 (51), տպագրության է հանձնել չորրորդը («Էլեկտրոնային մամուլի տեղեկատվական ժանրերի շարահյուսական մի քանի

առանձնահատկություններ>>, Вестник РАУ): Ներկայումս շարադրում է հաջորդ հոդվածները: Գիտական անհրաժեշտ նյութերով համալրում է ատենախոսությունը:

**ՈՐՈՇԵՑԻՆ** – Հայոց լեզվի ամբիոնի ասպիրանտ Անուշ Խաչատրյանին ատեստավորել:

**ԼՍԵՑԻՆ** – Հայոց լեզվի ամբիոնի առկա 2 – րդ կուրսի ասպիրանտ Նոանե Մանվելի Սարգսյանի ատեստավորման հարցը:

**ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ** – Պրոֆ., պրոֆ. Ա. Ավագյանը, Յու. Ավետիսյանը, Ա. Աբաջյանը, դոց. դոց. Ա. Սարգսյանը, Բ. Ներսիսյանը:

Նշվեց, որ Նոանե Սարգսյանը 2019 թ. ընդունվել է ասպիրանտուրա (առկա ուսուցում) <<Հայոց լեզու>> մասնագիտության գծով (Ժ.02.01): Նրա ատենախոսության թեման է «Գրաբար - միջին հայերեն - արևմտահայերեն փոխանցումները բայական համակարգում» (Ժ.02.01 «Հայոց լեզու»), ղեկավար՝ ք. գ. դ., պրոֆ. Յու. Ավետիսյան:

Նոանե Սարգսյանը 2020-2021 ուստարում լրացրել է մասնագիտական պրակտիկայի ծրագրով նախատեսված ժամաքանակը («Եվրոպական լեզուների և հաղորդակցության» (հեռակա, երկու կիսամյակ), «Մաթեմատիկայի և մեխանիկայի» (առկա, երկու կիսամյակ), «Ինֆորմատիկայի և կիրառական մաթեմատիկայի» (առկա, մեկ կիսամյակ) ֆակուլտետներում): Մասնակցել է պարտադիր (3) և ոչ պարտադիր (3) դասընթացներին, հանձնել է ստուգաբք «Հոգեբանություն» առարկայից: Շարադրել է բայի եղանակներին վերաբերող տեսական հատվածը: Տպագրության է հանձնել մեկ հոդված՝ «Որոշ դիտարկումներ արևմտահայերենի «կոր» մասնիկի վերաբերյալ» վերնագրով: Եվս երկու հոդված շարադրման փուլում են, որոնցից մեկը վերաբերում է միջին հայերեն-արևմտահայերեն փոխանցումներին հրամայական եղանակի համակարգում, մյուսը՝ վաղակատար դերբայի ժխտական խոնարհմանը:

**ՈՐՈՇԵՑԻՆ** –Հայոց լեզվի ամբիոնի ասպիրանտ Նոանե Սարգսյանին ատեստավորել:

**ԼՍԵՑԻՆ** – Հայոց լեզվի ամբիոնի առկա առաջին կուրսի ասպիրանտ Լիլիթ Հմայակի Ծատուրյանի ատեստավորման հարցը:

**ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ** – Պրոֆ. պրոֆ. Ա. Ավագյանը, Յու. Ավետիսյանը, Ա. Աբաջյանը, դոց. դոց. Ա. Սարգսյանը, Բ. Ներսիսյանը:

Նշվեց, որ Լիլիթ Ծատուրյանը 2020 թ. ընդունվել է ասպիրանտուրա (առկա ուսուցում) <<Հայոց լեզու>> մասնագիտության գծով (Ժ.02.01): Նրա ատենախոսության թեման է <<Բառաքերականական փոխակերպումները ռուս-հայերեն թարգմանություններում>> (Վ. Պիկով <<Ֆավորիտ >>)> (Ժ.02.01 «Հայոց լեզու»), ղեկավար՝ Բ. Գ. Պ., պրոֆ. Յու. Ավետիսյան: Լ. Ծատուրյանը մասնակցել է <<Գիտության փիլիսոփայություն>>, <<Անգլերեն լեզու (հումանիտար մասնագիտությունների համար)>>, <<Տեղեկատվական և կրթական նոր տեխնոլոգիաներ>>, <<Մանկավարժություն>>, <<Գիտական հետազոտությունների մեթոդաբանություն>> դասընթացներին և ստացել է համապատասխան կրեդիտներ: Հոդվածները շարադրման փուլում են: Ուսումնասիրել է տեսական գրականությունը:

**ՈՐՈՇԵՑԻՆ** – Հայոց լեզվի ամբիոնի ասպիրանտ Լիլիթ Ծատուրյանին ատեստավորել:

**ԼՍԵՑԻՆ** - Հայոց լեզվի ամբիոնի ասպիրանտ (առկա ուսուցում, 1-ին կուրս) **Հաջար Ռեզայի Մումենիի** ատեստավորման հարցը:

**ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ** - Պրոֆ. Ա. Ավագյանը, պրոֆ. Յու. Ավետիսյանը, դոց. Լ. Թեյլանը, դոց. Ա. Սարգսյանը, դոց. Ա. Տեր-Մինասյանը և ուրիշներ:

Նշվեց, որ Իրանի Իսլամական Հանրապետության քաղաքացի Հաջար Մումենիին ԵՊՀ-ի և Սպահանի (Իրանի) համալսարանի միջև համագործակցության պայմանագրի շրջանակներում 2020 թ. ընդունվել է ասպիրանտուրա (առկա ուսուցում) <<Հայոց լեզու>> մասնագիտության գծով (Ժ.02.01): Նրա ատենախոսության թեման է <<Իրանական փոխառությունների իմաստակառուցվածքային զարգացումը հայերենում>>, ղեկավար՝ Բ. Գ. Պ., դոց. Փառանձեմ Մեյթիխանյան:

Ուսումնասիրել է տեսական գրականությունը:

**ՈՐՈՇԵՑԻՆ** - Հայոց լեզվի ամբիոնի ասպիրանտ **Հաջար Մումենիին** ատեստավորել:

**ԼՄԵՑԻՆ** - Ակադ. Հր. Թամրազյանի անվան հայ գրականության պատմության ամբիոնի հայցորդ Գրետա Գասպարյանի ատեստավորման հարցը:

**ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ** – Պրոֆ. պրոֆ. Ա. Ավագյանը, Ալ. Մակարյանը, Ս. Մուրադյանը, Վ. Սաֆարյանը, դոց. Ռ. Էլոյանը:

Նշվեց, որ հայցորդ Գ. Գասպարյանի ատենախոսության թեման է «Ավետիք Իսահակյանի ստեղծագործությունը Արևելքի և Արևմուտքի գրական զուգահեռներում»: Գիտական ղեկավար է նշանակվել դոկտոր, պրոֆեսոր Սամվել Մուրադյանը:

2020 թվականի նոյեմբերից մինչև 2021 թվականի մայիս ընկած ժամանակահատվածում ուսումնասիրել է 19-րդ դարավերջի և 20-րդ դարասկզբի արևմտաեվրոպական փիլիսոփայությունը, մասնավորապես Ֆրիդրիխ Նիցշեի փիլիսոփայությունը՝ գտնելու համար նրա գաղափարների արտահայտությունը Ավետիք Իսահակյանի ստեղծագործության մեջ:

Ավարտել է երրորդ հոդվածը, որ վերաբերում է Իսահակյանի՝ պարսկական գրականությանն ու մշակույթին առնչվող ստեղծագործություններին, որ խմբագրական որոշ աշխատանքներ կատարելուց հետո կուղարկենք տպագրության:

**ՈՐՈՇԵՑԻՆ** - Հայ գրականության ամբիոնի հայցորդ Գրետա Գասպարյանին ատեստավորել:

**ԼՄԵՑԻՆ** - Ակադ. Հր. Թամրազյանի անվան հայ գրականության պատմության ամբիոնի հեռակա ուսուցմամբ ասպիրանտ Աննա Ստեփանյանի ատեստավորման հարցը:

**ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ** – Պրոֆ. պրոֆ. Ա. Ավագյանը, Ալ. Մակարյանը, Ս. Մուրադյանը, Վ. Սաֆարյանը, դոց. Ռ. Էլոյանը:

Նշվեց, որ ասպիրանտ Ա. Ստեփանյանի ատենախոսության թեման է «Հեղինակային հայեցակարգը և սուրբգրային կանոնը հայ միջնադարյան քնարերգության մեջ», գիտական ղեկավարն է պրոֆ. Վ. Հ. Սաֆարյանը:

2017թ. դեկտեմբերի 27-ից մինչև 2021թ. մայիսի 13-ն ընկած ժամանակահատվածում ասպիրանտը զբաղվել է թեմայի հետ առնչվող նյութերի հավաքագրման աշխատանքներով: Ուսումնասիրել է հայ միջնադարյան քնարերգությունը, աղբյուրագիտական և տեսական աշխատություններ:

2020 թվականի ընթացքում տպագրության է հանձնել թեմային վերաբերող ևս երկու հոդված: ԲՈԿ-ի կողմից սահմանված պարբերականներում տպագրվել են թեմային առնչվող երեք հոդվածներ, չորրորդը գտնվում է տպագրման ընթացքի մեջ: Հոդվածներն ունեն հետևյալ վերտառությունները՝ «Թեմատիկ և նկարագրական ընդհանրությունները 12-14-րդ դարերի հայ և ֆրանսիական քնարերգության մեջ», «Կյանքի ու մահվան, ազատության ու կամքի փիլիսոփայական խորհուրդը Հովհաննես Սարկավագի «Բան իմաստութեան...» փիլիսոփայական պոեմում», «Վարդի և սոխակի մոտիվի ուշմիջնադարյան խորհրդանշանային ընկալումները», «Ստեղծագործելու շնորհի անհատական և կանոնական ընկալումների դրսևորումը հայ միջնադարյան քնարերգության մեջ», «Հեղինակի խնդիրը հայ միջնադարյան օրհներգության մեջ»: Հոդվածներն ընթերցվել են տարբեր գիտաժողովների ընթացքում: Առաջիկա ամիսների ընթացքում ևս մեկ գիտաժողովի շրջանակում ներկայացվելու է նոր զեկույց՝ «Հեղինակ-թարգմանչի դերը հայ միջնադարյան կաֆաներում» վերնագրով:

**ՈՐՈՇԵՑԻՆ** - Հայ գրականության ամբիոնի հեռակա ուսուցմամբ ասպիրանտ Աննա Ստեփանյանին ատեստավորել:

**ԼՍԵՑԻՆ** - Ակադ. Հր. Թամրազյանի անվան հայ գրականության պատմության ամբիոնի առկա ուսուցմամբ ասպիրանտ Մանե Դանիելյանի ատեստավորման հարցը:

**ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ** – Պրոֆ. պրոֆ. Ա. Ավագյանը, Ալ. Մակարյանը, Ս. Մուրադյանը, Վ. Սաֆարյանը, դոց. Ռ. Էլոյանը:

Նշվեց, որ ասպիրանտ Մ. Դանիելյանի 2020 թվականին ընդունվել է առկա ասպիրանտուրա ԵՊՀ հայ բանասիրության ֆակուլտետի ակադ. Հր. Թամրազյանի անվ. հայ գրականության պատմության ամբիոնում ԲՈԿ-ի անվանացանկին համապատասխան

Հայ դասական գրականություն (Ժ. 01.01) մասնագիտությամբ: Թեկնածուական ատենախոսության թեման է «Կնոջ ազգային և հասարակական դերի ըմբռումը՝ ըստ Բաբբու »՝ Բ. Գ. Դ., պրոֆ. Ալ. Մակարյանի գիտական ղեկավարությամբ: Թեմայի հետ առնչվող նյութերի վերընթերցման, հավաքագրման և դասակարգման աշխատանքներին զուգընթաց պատրաստվում է տպագրել երկու հոդված, որոնցից մեկը՝ համահեղինակությամբ:

Ուսումնասիրում եմ Բաբբու բազմաժանր ու բազմաշերտ գրական ժառանգությունը, գրողին նվիրված մենագրություններն ու այլ ուսումնասիրությունները (Ա.Ավթանդիլյան, Ա.Գևորգյան, Ե.Պետրոսյան, Ս. Սարինյան):

2020-2021 ուստարում հաջողությամբ հանձնել է պարտադիր և ընտրովի դասընթացների ստուգարքները՝ ստանալով անհրաժեշտ կրեդիտները:

2020-2021 ուստարում որպես դասախոս աշխատելով Հայ-ռուսական համալսարանում՝ լրացրել է ասպիրանտական պրակտիկայի համար անհրաժեշտ 35 դասաժամերը:

**ՈՐՈՇԵՑԻՆ** - Հայ գրականության պատմության ամբիոնի առկա ուսուցմամբ ասպիրանտ Մանե Դանիելյանին ատեստավորել:

**ԼՍԵՑԻՆ** - Ակադ. Հր. Թամրազյանի անվան հայ գրականության ամբիոնի հայցորդ Աննա Թորոսյանի ատեստավորման հարցը:

**ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ** – Պրոֆ. պրոֆ. Ա. Ավագյանը, Ալ. Մակարյանը, Ս. Մուրադյանը, Վ. Սաֆարյանը, դոց. Ռ. Էլոյանը:

Նշվեց, որ հայցորդ է ձևակերպվել 2017թ. հունվարին: Թեկնածուական ատենախոսության թեման է «Ղազարոս Աղայանի գեղարվեստական արձակը», գիտական ղեկավարն է Բ.Գ.Դ., պրոֆ. Ալ. Մակարյանը: Հայցորդը հանձնել է կրեդիտային համակարգով նախատեսված բոլոր ստուգարքները, պատրաստվում է հանձնել մասնագիտական քննությունը և ինֆորմատիկա առարկայի ստուգարքը: Ա. Թորոսյանը ԲՈԿ-ի կողմից ընդունված հանդեսներում տպագրել է



Տարածաժամանակային ընդգրկումները Ղ. Աղայանի հուշագրության մեջ», «Ղ. Աղայանի հուշագրությունը», «Արհեստի դերի կարևորումը Ղ. Աղայանի «Անահիտ» հեքիաթում», «Բանահյուսական մոտիվների աղայանական մեկնությունները «Արեգնազան կամ կախարդանական աշխարհ» հեքիաթում», «Գյուղաշխարհի կյանքն ու կնոջ ազատագրության խնդիրը Աղայանի «Երկու քույր» վեպում, Գաղափարական հարցադրումները «Արություն և Մանվել» վեպում, Գյուղաշխարհի նահապետական կյանքի պատկերը Ղազարոս Աղայանի «Բաժանություն» վիպակում լույս կտեսնի Հայագիտության հարցեր հանդեսի 1-ին համարում:

**ՈՐՈՇԵՑԻՆ.**- Հայ գրականության պատմության ամբիոնի հայցորդ Աննա Թորոսյանին ատեստավորել:

**ԼՍԵՑԻՆ** - Ակադ. Հր. Թամրազյանի անվան հայ գրականության պատմության ամբիոնի առկա ուսուցմամբ ասպիրանտ Աստղիկ Սողոյանի ատեստավորման հարցը:

**ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ** – Պրոֆ. պրոֆ. Ա. Ավագյանը, Ալ. Մակարյանը, Ս. Մուրադյանը, Վ. Սաֆարյանը, դոց. Ռ. Էլոյանը:

Նշվեց, որ Ա. Սողոյանի թեկնածուական ատենախոսությանս թեման է «Խաչատուր Աբովյանի պատումի արվեստը»՝ Բ. Գ. դ., պրոֆ. Ալ. Մակարյանի գիտական ղեկավարությամբ: Թեմայի հետ առնչվող նյութերի հավաքագրման և դասակարգման աշխատանքներին զուգընթաց ԲՈԿ-ի անվանացանկով տպագրել է գիտական 6 հոդված. 1. «Խաչատուր Աբովյանի «Հազարփեշեն» երգիծապոեմը», «ԵՊՀ ՈՒԳԸ գիտական հոդվածների ժողովածու», 2017, 1.2 (19), հասարակական գիտություններ, էջ 31-39, 2. «Խաչատուր Աբովյանի «Աղասու խաղը» քնարապատմողական պոեմի երկխոսային բնույթը», «Վեմ» համահայկական հանդես, 2019, 2 (66), էջ 67-85, 3. «Խաչատուր Աբովյանի «Աղասու խաղը» պոեմի պատումի արվեստը», «Հայագիտության հարցեր», 2019, 2 (17), էջ 117-133, 4. «Խաչատուր Աբովյանը մանկագիր. պատումի առանձնահատկությունները «Պատմություն Տիգրանի» վեպում», «Բանբեր Երևանի համալսարանի. Բանասիրություն», 2019, 3 (30),

էջ 14-25, 5. «Նախաշաւիղ կրթութեան...» դասագիրքը՝ որպէս մանկական ստեղծագործությունների ընթերցարան», «Հայագիտության հարցեր», 2020, 1 (19), էջ 129-142, 6. «Հերոսի ճանապարհի մոնումիֆի մոդելը Խաչատուր Աբովյանի «Վերք Հայաստանի» վեպում», «Պատմաբանասիրական հանդես», 2020, 2 (214), էջ 220-233:

Ուսումնասիրել է Խաչատուր Աբովյանի բազմաժանր ու բազմաշերտ գրական ժառանգությունը և աբովյանագիտական գրականությունը (Պ. Հակոբյան, Ս. Բազյան, Վ. Պարտիզունի, Ն. Մուրադյան, Հր. Մուրադյան, Ե. Շահագիզ):

Ուսումնասիրել է նաև տեսական գրականություն՝ Ժ. Ժենետի, Վ. Շմիդի, Մ. Բալի, Լ. Դոլեգելի ուսումնասիրությունները պատումի տեության մասին, ինչպէս նաև ծանոթացել է Ջ. Փրինսի «Նարատոլոգիայի բառարանին», որը համապարփակ և բազմակողմանի տեղեկություններ է պարունակում խնդրի մասին և մեկտեղում տարբեր գրականագետների ու գրականության տեսաբանների ուսումնասիրությունները:

2018-2019 ուստարում հաջողությամբ հանձնել է պարտադիր և ընտրովի դասընթացների ստուգաքնները՝ ստանալով անհրաժեշտ կրեդիտները:

2020-2021 ուստարում դասավանդելով ամբիոնում՝ լրացրել է ասպիրանտական պրակտիկայի համար անհրաժեշտ 35 դասաժամերը:

2020-ի ապրիլի 27-28-ը մասնակցել է Սանկտ Պետերբուրգի պետական համալսարանում կայացած «Հայ մեծ լուսավորիչներ Մկրտիչ Խրիմյանը և Ղևոնդ Ալիշանը» միջազգային գիտաժողովին՝ հանդես գալով «Հայրենիքի միջակայս կերպարը Ալիշան-Աբովյան զուգահեռում» վերնագրով զեկուցմամբ:

Գիտական գործունեությունից բացի փորձել է նաև հանրայնացնել Աբովյանի մասին իր ուսումնասիրությունները. համագործակցելով Խ. Աբովյանի տուն-թանգարանի հետ՝ տպագրված ուսումնասիրություններիս հիման վրա հընթացս կազմում ենք կրթական ծրագիր և այն քանիցս ներկայացրել է Երևանի տարբեր դպրոցներում: Քրդերի և քրդական բանահյուսության շուրջ Աբովյանի

ուսումնասիրությունների մասին բանախոսել է քրդական համայնքի համար և հողվածներ տպագրել քրդական «Զագրոս» թերթում:

2020-ի հունիսի 24-ին հանձնել է «Հայ դասական գրականություն» որակավորման քննությունը՝ ստանալով «գերազանց» գնահատական:

2021-ի մայիսի 19-ին պաշտպանել է ատենախոսությունը ԵՊՀ գործող՝ ՀՀ ԲՈԿ-ի գրականագիտություն 012 մասնագիտական խորհրդի նիստում:

**ՈՐՈՇԵՑԻՆ** - հայ գրականության պատմության ամբիոնի առկա ուսուցմամբ ասպիրանտ Աստղիկ Սողոյանին ատեստավորել:

**ԼՄԵՑԻՆ** - Հայ նորագույն գրականության ամբիոնի առկա ուսուցման երրորդ տարվա ասպիրանտ Առլինա Արթուրի Սարգսյանի ատեստավորման հարցը:

**ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ** – Պրոֆ. պրոֆ. Ա. Ավագյանը, Ալ. Մակարյանը, Ս. Մուրադյանը, Վ. Սաֆարյանը, դոց. Ս. Գրիգորյանը:

Նշվեց, որ Առլինա Սարգսյանի թեկնածուական ատենախոսության թեման է «Արդի հայ պատմավեպի պոետիկան»: 2020-2021 ուսումնական տարվա ընթացքում տպագրել է մեկ հոդված, ևս մեկը հանձնել է տպագրության: Որպես ասպիրանտական-գիտամանկավարժական պրակտիկա ամբիոնում վարել է սեմինար պարապմունքներ: Հունիսի 29-ին պատրաստվում է հանձնել որակավորման քննությունը:

**ՈՐՈՇԵՑԻՆ** - Հայ նորագույն գրականության ամբիոնի առկա ուսուցմամբ ասպիրանտ Առլինա Սարգսյանին ատեստավորել:

**ԼՄԵՑԻՆ** – Ընդհանուր լեզվաբանության ամբիոնի առկա ուսուցման ասպիրանտ Լիանա Ազիզյանի ատեստավորման հարցը:

**ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ** – Պրոֆ. պրոֆ. Ա. Ավագյանը, Ա. Աբաջյանը, Յու. Ավետիսյանը, դոց. Վ. Պետրոսյանը և ուրիշներ:

Նշվեց, որ ընդհանուր լեզվաբանության ամբիոնի ասպիրանտ Լ. Ազիզյանը 2020-2021թթ. ուսումնառության աշնանային և գարնանային կիսամյակների ընթացքում կատարել է հետևյալ աշխատանքը.

- Ուսումնասիրել է տեսական գրականություն թեմայի վերաբերյալ և շարադրել ատենախոսության երկու գլուխները՝ «Ձայնավորական համակարգերը» և «Երկրաբաբառային/եռաբաբառային համակարգերը»:

**ՈՐՈՇԵՑԻՆ** - Ընդհանուր լեզվաբանության ամբիոնի առկա ուսուցման ասպիրանտ Լիանա Ազիզյանին ատեստավորել:

**ԼՄԵՑԻՆ** – Ընդհանուր լեզվաբանության ամբիոնի հայցորդ Ասյա Դարբինյանի ատեստավորման հարցը:

**ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ** – Պրոֆ. պրոֆ. Ա. Ավագյանը, Ա. Աբաջյանը, Յու. Ավետիսյանը, դոց. Վ. Պետրոսյանը և ուրիշներ:

Թեմա՝ «Գրական արևելահայերենի և վրացերենի հոլովման համակարգերի զուգադրական – տիպաբանական քննություն», ղեկավար՝ Բ. Գ. Թ., դոց. Վ. Պետրոսյան:

Նշվեց, որ ընդհանուր լեզվաբանության ամբիոնի հայցորդ Ասյա Դարբինյանը 2020-2021թթ. ուսումնառության աշնանային և գարնանային կիսամյակների ընթացքում կատարել է հետևյալ աշխատանքը.

- Ուսումնասիրել է վրացերենի հոլովի և թվի քերականական կարգերին վերաբերող մասնագիտական գրականությունը, մասնավորապես, Առնոլդ Չիքոբավայի, Ակակի Շանիձեի, Թ. Ութուրգայիձեի աշխատությունները՝ քննության առնելու և հայերենի համապատասխան կառույցներին զուգադրելու նպատակով:
- Աշխատում է հոդվածի վրա, որը վերաբերում է հայերենի և վրացերենի հոլովների թվին:
- Ուսումնասիրել է հոլովման համակարգի վերաբերյալ առկա բանավեճերը հայերենում և վրացերենում, պատրաստվում է ներկայացնել ևս մեկ հոդված առկա բանավեճերի վերաբերյալ:

**ՈՐՈՇԵՑԻՆ** - Ընդհանուր լեզվաբանության ամբիոնի հայցորդ Ասյա Դարբինյանին ատեստավորել:

**ԼՍԵՑԻՆ** – Հայոց լեզվի պատմության ամբիոնի առկա ասպիրանտ Մարիանա Սամվելի Բոցինյանի ատեստավորման հարցը /թեմա՝ «Չալդրի և հարակից շրջանների հայերեն խոսվածքները», գիտական ղեկավար՝ հայոց լեզվի պատմության ամբիոնի վարիչ, Բ.գ.դ., պրոֆ. Աննա Հենրիկի Աբաջյան/:

**ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ** – Պրոֆ. պրոֆ. Ա. Ավագյանը, Ա. Աբաջյանը, Յու. Ավետիսյանը, դոց. Վ. Պետրոսյանը և ուրիշներ:

Նշվեց, որ 2020-2021 ուստարվա ընթացքում ասպիրանտը հավաքել է գրեթե բոլոր անհրաժեշտ կրեդիտները՝ մասնակցելով պարտադիր և ոչ պարտադիր դասընթացներին: Գիտական երկու հոդվածներ գտնվում են տպագրման փուլում: Թեկնածուական ատենախոսության 1-ին և 2-րդ գլուխները գրեթե պատրաստ են:

**ՈՐՈՇԵՑԻՆ** – Հայոց լեզվի պատմության ամբիոնի առկա ասպիրանտ Մարիանա Բոցինյանին ատեստավորել:

**Օրակարգի չորրորդ հարցով** լսեցին պրոֆեսորների և դոցենտների թափուր պաշտոնների տեղակալման ընտրության հարցը:

**ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ** - Պրոֆ., պրոֆ. Ա. Ավագյանը, Ալ. Մակարյանը, Ա. Աբաջյանը, Յու. Ավետիսյանը, դոց., դոց. Ն. Դիլբարյանը, Վ. Պետրոսյանը, Թ. Տոնոյանը և ուրիշներ:

Գիտխորհրդի նախագահ պրոֆ. Ա. Ավագյանը ներկայացրեց պրոֆեսորների և դոցենտների համակազմի մրցույթային ընտրակարգը և պաշտոնների տեղակալման ընտրակարգի դրույթները: Մրցույթային հանձնաժողովի նախագահ պրոֆ. Ա. Աբաջյանը սկսեց ներկայացնել թափուր տեղերի համար դիմած թեկնածուների գործերը: Դոց. Ն. Դիլբարյանը առաջարկեց դադարեցնել քննարկումը՝ նկատի ունենալով այն հանգամանքը, որ այս փուլում պետք է մերժել իրականացնել դոցենտների և պրոֆեսորների թափուր տեղերի համար հայտարարված մրցույթի քվեարկությունը՝ ունենալով ներքոհիշյալ հիմնավորումները:

1. Ներկա փուլում ՀՀ նախագահի կողմից ՀՀ Սահմանադրական դատարանում վիճարկվում է «Բարձրագույն կրթության և գիտության մասին» ՀՀ օրենքի նախագիծը,

որում հստակ փոփոխություններ են նախատեսված պրոֆեսորադասախոսական անձնակազմի պաշտոնների տեղակալման կարգի վերաբերյալ:

2. Անհասկանալի է ոչ միայն հապճեպ շտապողականությունը, որով լիազոր մարմինը ջանում է խնդիրը լուծել, այլև մրցույթը անցած պրոֆեսորին, դոցենտին մեկ դրույքաչափով ծանրաբեռնելու պարտադրանքը, որի հետևանքով մի շարք մանկավարժ – գիտնականներ պարզապես փողոց են նետվելու: Առնվազն զարմանք է հարուցում այն իրողությունը, որ դասախոսը, որը մրցույթով չի անցել, բայց շարունակում է դասավանդել կես կամ քառորդ դրույքով, չի կարող հավակնել դոցենտի կամ պրոֆեսորի աշխատավարձի, անգամ եթե նա ունի ԲՈԿ – ի կողմից շնորհված կոչումը: Նման մոտեցումը ոչ միայն կաղքատացնի ամբիոնների դասախոսական կազմը, այլև լուրջ հարված կհասցնի գիտությանն ու կրթությանը, քանի որ ամբիոնները հնարավորություն չեն ունենա հրավիրել մասնագետներ դրսից:
3. ԵՊՀ-ն չունի պրոֆեսորադասախոսական կազմի տեղակալման օբյեկտիվ մրցույթ անցկացնելու հնարավոր չափով մշակված կանոնակարգ: Գործող կարգը (փակ/գաղտնի քվեարկություն) չի ապահովում հնարավոր օբյեկտիվ ընտրություն՝ պայմանավորված ընտրողի խիստ սուբյեկտիվ կողմնորոշումներով և ընկալումներով (օրինակ, հոդվածների հանգամանքը՝ չէ՞ որ գոյություն ունեն 5 էջանոց և 30 էջանոց հոդվածներ: Արդյո՞ք միայն հոդվածների քանակի հաշվառումը տալիս է օբյեկտիվ լինելու հիմքեր): Պետք է մշակել նոր չափորոշիչներ՝ ասենք գործարկելով տեղակալման համար որոշակի միավորներ կուտակելու սկզբունքը: Իսկ փակ/գաղտնի քվեարկությամբ ընտրությունը կարող է լինել ընտրվողին ընդամենը հավելյալ միավորներ բերող բաղադրիչներից մեկը: Ըստ որում, բուհական կառավարումը ունի այս հարցի կարգավորման միջազգային հարուստ փորձ (որում, ի դեպ, առաջնային տեղ ունի պայմանագրային համակարգը), որը կարելի է մեկ անգամ ևս ուսումնասիրել և գործարկել:
4. ՀՀ Կառավարությունը հայագիտությունը հռչակել է գիտակրթական քաղաքականության գերակա ուղղություն: Ենթադրվում է հատուկ վերաբերմունք այդ

ուրտի և այդ ուրտը ներկայացնող գիտակրթական կազմի նկատմամբ: Մինչդեռ բուհական համակարգում տարեցտարի (և արդեն երկար տարիներ) օբյեկտիվ և սուբյեկտիվ պատճառներով կրճատվում/պակասեցվում են հայագիտական, մասնավորապես հայերենագիտական առարկաներին տրվող հատկացումներն ու ժամաքանակները: Համոզված ենք՝ բուհերի դասախոսական կազմի տեղակալման մրցույթում պետք է մշակել առանձնահատուկ մոտեցումներ՝ որպես տրիտուր և արտահայտություն հռչակված գերակա ուղղության:

5. Անհասկանալի է նաև, որ վերջին տարիներին տարբեր պատճառներով առարկայական ժամաքանակների կրճատումները որևէ կերպ չեն փոխել դասախոսների համար նախատեսված դրույքային բեռնվածությունների պահանջվող ժամաքանակները, մինչդեռ տրամաբանությունը հուշում է, որ դրանք ևս պետք է էականորեն նվազեն՝ ասել է՝ ոչ թե 700, այլ 5 – 6 հարյուր ժամ:

**ՈՐՈՇԵՑԻՆ** - Հիմք ընդունելով վերը հիշատակված խնդիրները և ստեղծված իրավական հակասությունները՝ այս փուլում մերժել, չանցկացնել պաշտոնների տեղակալման ընտրություններ: Բաց քվեարկության արդյունքներն են՝ կողմ - 31,

դեմ - չկա,

ձեռնպահ – 1

Ռեկտորատին առաջարկել պահպանել ԵՊՀ-ում վերջին տարիներին գործող կարգը. խնդիրը կարգավորել պայմանագրային սկզբունքով, մինչև վերը նշված գործոնները կկարգավորվեն:

**Ընթացիկ հարցերում քննարկվեցին.**

ա/ **ԼՍԵՑԻՆ** – Ակադեմիկոս Հրանտ Թամրազյանի անվան հայ գրականության պատմության ամբիոնի վարիչ, բ. գ. դ., պրոֆ. Ալբերտ Արշավիրի Մակարյանի և ասպիրանտ Աստղիկ Վալերիանի Սողոյանի՝ «Հակոբ Պարոնյանը մանկագիր» մենագրությունը տպագրության երաշխավորելու հարցը:

**ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ** – Պրոֆ. պրոֆ. Ա. Ավագյանը, Ալ. Մակարյանը, Ս. Մուրադյանը, Վ. Սաֆարյանը, Ժ. Քալանթարյանը, դոց. դոց. Ա. Ջրբաշյանը և Ռ. Էլոյանը:

Նշվեց, որ 2021 թ. մայիսի 27-ին լրանում է հանճարեղ երգիծաբան Հակոբ Պարոնյանի մահվան 130-րդ տարելիցը, և ահա քննարկման ներկայացված մենագրության համահեղինակները՝ բանասիրության դոկտոր, պրոֆ. Ալ. Մակարյանը և իր ասպիրանտ Ա. Սողոյանը, հաճելի անակնկալ են մատուցել հայ հանրությանն ու գիտական շրջաններին: Մենագրությունը պարոնյանագիտության մեջ հանճարեղ երգիծաբանին որպես մանկագրի ներկայացնելու առաջին ամբողջական փորձն է, որի էջերում քննվում են Հ. Պարոնյանի իսկ հիմնադրած հայոց մանկական առաջին պարբերականը՝ «Թատրոն. բարեկամ մանկանց» պատկերագարդ երկշաբաթաթերթը:

Մենագրության չորս գլուխներում ուսումնասիրվում են պարբերականի հրատարակման պատմությանն ու բովանդակությանը վերաբերող ամենատարբեր խնդիրներ: Յուրաքանչյուր խնդիր դիտարկվում է հայ և այլալեզու մանկական գրականության, պարբերական մամուլի ու մանկավարժական տեսությունների լայն համապատկերում՝ փաստական հարուստ նյութի ներգրավմամբ:

Նշվեց, որ մանկագիր Պարոնյանն ըստ էության լրացնում է երգիծաբան Պարոնյանին: Քննությունը պարզում է, որ Պարոնյան մանկագիրը նախապատվությունը տալիս է իրապատում ժանրատեսակներին՝ իրապատում հեքիաթին, հեքիաթ-պատմվածքին, պատմվածքին և խրատական պատմություններին:

Ուսումնասիրության մեջ ներկայացվում են նաև Պարոնյանի մանկագրական երկերում կերպարաստեղծման սկզբունքները: Ուշագրավ է պարբերականի պատկերագարդումների և գրական երկերի զուգահեռ քննությունը, ուր ակնհայտ է դառնում նաև Պարոնյանի՝ սեռային սկզբունքով պայմանավորված դաստիարակության մոտեցումը:

Մենագրությունը նոր և թարմ խոսք է պարոնյանագիտության մեջ. այն բացահայտում է մինչ օրս ստվերում մնացած մի շարք խնդիրներ, որոնք վերաբերում են Հակոբ Պարոնյանի մանկագրական հարուստ ժառանգությանը: Գրքի հրատարակությունը, որ



իրականացվելու է համահեղինակների միջոցներով, կնպաստի ն՛ պարոնյանագիտության, ն՛ հայ մանկագրական գրականության հետագա ուսումնասիրմանն ու զարգացմանը:

Մենագրության գիտական խմբագիրն է բ. գ. թ., դոց. Ա. Ջրբաշյանը, իսկ գրախոսները՝ բ. գ. դ., պրոֆ. Ա. Ջիվանյանը և բ. գ. թ., դոց. Ն. Վարդանյանը:

**ՈՐՈՇԵՑԻՆ** – Ակադեմիկոս Հրանտ Թամրազյանի անվան հայ գրականության պատմության ամբիոնի վարիչ, բ. գ. դ., պրոֆ. Ալբերտ Արշավիրի Մակարյանի և ասպիրանտ Աստղիկ Վալերիանի Սողոյանի՝ «**Հակոբ Պարոնյանը մանկագիր**» մենագրությունը երաշխավորել տպագրության:

բ/ **ԼՍԵՑԻՆ** - Բակալավրի և մագիստրոսի կրթական ծրագրերի ղեկավարների հաշվետվությունը:

**ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ** – Պրոֆ. պրոֆ. Ա. Ավագյանը, Ալ. Մակարյանը, Ժ. Քալանթարյանը, Յու. Ավետիսյանը, Ա. Աբաջյանը, դոց. դոց. Ա. Ջրբաշյանը, Վ. Պետրոսյանը, Ա. Սարգսյանը, Ս. Գրիգորյանը և ուրիշներ:

Նշվեց, որ բակալավրի և մագիստրոսի կրթական ծրագրերի ղեկավարները պարբերաբար հանդիպել են ուսանողներին և մագիստրոսներին, ներկայացրել կրթական ծրագրերի առանձնահատկությունները:

**ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ**

**ՊՐՈՖ. Ա. ԱՎԱԳՅԱՆ**

**ԳԻՏՔԱՐՏՈՒՂԱՐ**

**ԴՈՑ. Ա. ԳԱԼՍՏՅԱՆ**